

Երեւա հօտիւքն 'ի յարօտ,  
 Ի մերձաւոր տեսին լեռնէ  
 Զերկնից բանաւն 'ի մօտուստ,  
 Ընդ արշալուրձս այգոյն վազ-  
 Եւ 'ի բարձանց վայրիկեալ  
 Հրիշտակք փառօք սաւառնեալ:  
 Քնարաց ա' երգոց խընդուծիւն  
 Ընդ օգս երկնից ծաւալէր.  
 Ապա կացին պարանցիկք  
 Ի ցուրտ վիմին 'ի վերուստ.  
 Ուստ Մարիամ թըռանէր  
 Նըշուլաղարգ զերգ արփի:  
 Կամ թէ թէթէն՝ ամալդ պէս  
 Որ յոսկի վառ ցողացեալ,  
 Ճառնանչագեղ բոցատիպ  
 Հրեշտակականն փայլամբ,  
 Յարեաւ և ել խընդագին  
 Նուազաց պարուք փառացի:  
 Անհամեմատ մայր է սա,

Փափուքէլին յաւիտեանց,  
 Որ ել յաստեղս 'ի ծագել,  
 Մընեալ միայն թաղուհի.  
 Ընդ զուարթոց սլացաւ անմահ՝  
 Առ այն՝ որ զինքն էա՞ծ 'ի գոյ:

Քանզի երկիրն անարժան  
 Էր ընդունել զայն մարմին.  
 Երկիր, որում սերմն Ագամայ  
 Տայ զեւր մարմին յերր և 'ի նեխ.  
 Նըւթրեալն միայն երկնից  
 Ճարեալաց ընդ օգըս կենդանւոյն:  
 Աղանայ հանգունատիպ,  
 Որ նախ ելեալ 'ի տապանէն՝  
 Ոչ 'ի տիգր՝ ոչ 'ի մօրուստ  
 Խառ բընաւ զեռղ և դագար.  
 Այլ էւր թեւօքն նաւարկեալ  
 Եւ դառնայ զայ ըսպիտակ՝  
 Անգրէն 'ի հիւզն՝ ուստի ել:

Թարգմ. Հ. Ա. Շ.

ԿԵՍՏԱՐ ԱՐԵՎԻ.

## ԳԻՆԵՄՈԼՈՒԹԵԱՆ ՆԵՏԵՒԱՆՔԸ

### 2

Երկու հօգի առանց իրեն գիտնալուն՝  
 քանի մ'օրէ 'ի վեր զինքը լրտեսելու  
 ետեւէ էին թաղին մէջ. բայց տեսնե-  
 լով որ փուճ էր ամեն շանք և պիտի թո-  
 ղուին ու երթային, յանկարծ ասոր  
 անսովոր քալուածքը աչքերնին զարնե-  
 լով՝ մէկէն ճանչցան զինքը, ետեւէն  
 գնացին ու գինետուն մտան:

Իր հրամանն արդեօք ինծի հետ գա-  
 ւաթ մը խմելու, պարոն, ըսաւ անոնց.  
 մէկը՝ անոր օղոյ գաւաթ մը հրամ-  
 ցընելով:

— Ինծի հետ ալ, այնպէս չէ, աւել-  
 ցուց միւսը, անոր գաւաթը նորէն լե-  
 ցընելով զոր մէկէն քամեր էր:

Գինովին միտքը որդիքն եկան որ ա-  
 նօթի ծարաւ կը նեղուէին, ինչպէս  
 նաև տղուն գլխոյն գալիք փորձանքը.  
 բայց բանի տեղ չգրաւ: Հետզհետէ  
 գաւաթները պարպեց, կամաց կամաց  
 խելքը գլխէն գնաց:

— Ինչ խոնաւ գիշեր է, Ուարտէն,  
 ականջէն վար փսփրսաց անոնցմէ մէկը,  
 երբ ասիկա կ'ուզէր ալ տուն դառնալ,  
 յետ սպառելու ունեցած ստակին մեծ  
 մասը՝ ուսկից կը կախուէր թերևս աղ-  
 ջրկան կեանքը:

— Բարեկամներնուս համար մի  
 միայն գիշեր պէտք է իրենք զիրենք  
 ծածկելու համար, պարոն Ուարտէն,  
 կրկնեք մէկալը:

— Նստէ նայինք հօս, ըսաւ առաջին  
 խօսողը զանիկա անկիւն մը հրելով.  
 Գիտես, ամեն տեղ զպատանին փըն-  
 տուցինք. անմիջապէս հիմա կու գա-  
 յինք իմացընելու իրեն որ ամենայն  
 ինչ պատրաստ է. բայց ճշգրիտ տեղե-  
 կութեան մը պակասութենէն՝ չէինք  
 կրցեր զինքը գտնելու: Տես ուրեմն  
 ինչ զարմանալի բան. և չեմ կարծեր  
 որ գիտնար ինքը երբոր լոնտա եկաւ.  
 այնպէս չէ:

— Չէ, չէր գիտեր, պատասխանեց  
 հայրը:

երկուքը մէկմէկու աչք ըրին :

— Նաւահանգիստը պատրաստ նաւ մը կայ որ կէս գիշերուն ճամբայ պիտի ելնէ, առջի խօսք բացողը վրայ բերաւ . զինքը հօն տանինք . արդէն ուրիշի մ'անուամբ ճամբու ծախքն ալ կանխիկ վճարուած է : Ո՛հ, ինչ գեղեցիկ եղաւ քեզի հանդիպելին :

— Սքանչելի իրաւցընէ, կրկնեց երկրորդը :

— Երջանիկ բաղդ, ըսաւ առաջինը, ընկերոջը դարձեալ աչքով նշան ընելով :

— Այնպէս է, պատասխանեց երկրորդը՝ հասկընալով ընկերոջը միտքը :

— Երթանք ուրեմն շուտով, ըսաւ առաջինը . հապա գաւաթ մ'ալ՝ դեռ դուրս չելած :

Քանի մը վայրկեանէն ետքը, հայրը առանց գիտնալու զԺբաղդ որդին կամայ ականայ դահճաց մատներ էր :

## Ե

Տխուր տրտում անօթի ծարաւ եղբայր ու քոյր ժամանակնին կ'անցընէին : Ողորմելի թաքստոցէն անձկութեամբ ու ակնկալութեամբ ամենէն նուաղ ձայնին ալ ուշադրութեամբ ալ կանջ կը տնկէին : Վերջապէս դանդաղ ոտնաձայն մը սանդղոյն վարէն թընդաց, երթալով մօտեցաւ, գլուխը հասաւ, և անդին անդին տատանելով՝ մէկ մ'ալ հայրը սենեակը մտաւ :

Աղջիկը տեսնելով զինքը որ նորէն գինովցեր էր, կանթեղը ձեռքը ընդ առաջ դնաց . բայց յանկարծ կանկ առնելով՝ ահաւոր ճիւ մը փրցուց և անզգայ գետին փռուեցաւ : — Անդիէն հօրն ետեւէն անժանօթ մարդկանց շուքը աչքին զարկեր էր :

Մէկէն անոնց ներս յարձրելին, զպատանին բռնելն ու ձերբակալ ընենն մէկ եղաւ :

— Ապրի այդ ծերը, ո՛հ, ինչ դուրսութեամբ լմընցուցինք, անոնցմէ մէկը դարձաւ քովինին ըսաւ : Աղջիկը վեր վերցուր, թովմաս, ու եկս : — Ինչո՞ւ

կու լաս, աղջիկ դու . պարտապէս, ամենայն ինչ լմընցաւ, ալ ճար չկայ :

Պատանին վայրկեան մը քրոյը վրան ծռեւէն ետքը, կատաղութեամբ մը հօրը դառնալով՝ որ մինչև անդիի պատը գլորտրկեր՝ ապուշ ապուշ տեսարանը կը դիտէր :

— « Մտիկ ըրէ, հայր, — այնպէս ուժով կանչեց՝ որ հօրն ոսկորները մէկիկ մէկիկ սարսեցան . — գլուխդ իջնէ եղբորս ու իմ արինս . երբէք ոչ գուրգուրանաց և ոչ արգահատանաց բառ մը լսեր եմ բերնէդ . եթէ ապրիմ եթէ մեռնիմ, քեզի բնաւ թողութիւն տալիք չունիմ : Դուն ալ նմանապէս կամ ապրիս կամ մեռնիս, մեր յիշատակն զքեզ հալածեւէն բնաւ ետ պիտի չկենայ : Լաւ ուշ գիր . քանի մ'օրուան միայն կեանք ունեցողի մը պէս քեզի հետ ահա կը խօսիմ, և կ'իմացընեմ, հայր, որ երբ օր մ'Աստուծոյ առջև ելնես, որդիքդ ալ ձեռք ձեռքի տուած՝ հօն պիտի գտնուին նմանապէս, և արդարադի՛ւն, արդարադի՛ւն պիտի կանչեն քեզի դէմ : »

Ձեռքերը կապանքներովը սպառնալից վեր վերցընելով, աչքերն ալ սարսափած հօրը վրայ խօսիւ սևեռելով՝ դանդաղաբայլ սենեկէն ելաւ :

Այն վայրկեանէն ի վեր հայր ու քոյր զինքը միայն գերեզմանը տեսան :

## Ը

Երբ մութ ձմերային առաւօտեան միգախառն լոյսը անձուկ գաւիթը զարկաւ, լանալով թափանցելու նաև ողորմելի սենեկին ջախջախեալ պատահանէն, Ուարտէն ծանր քունէն արթննալով՝ ինքզինքը միայնակ գտաւ : Ոտք ելաւ կամաց կամաց, և աչքը չորս դին դարձընելով՝ տեսաւ որ գետնի բրդեայ անկողինը չէր աւրուած, և ուրիշ ամենայն ինչ մի և նոյն՝ վիճակին մէջ ինչպէս որ չբնացած թողեր էր . նշան մը չկար որ բաց իրմէ ուրիշ մը նոյն գիշերը սենեակն անցուցած ըլլար :

Աղջիկն ալ աներևութացեր էր :

Տանը բոլոր վարձուորներուն ու դը-  
րացիներուն տեղեկութիւն հարցուց ,  
բայց ոչ ոք ոչ տեսեր էր զայն ու ոչինչ  
լսեր էր անոր վրայ :

Թափառական փողոցները պտտե-  
լով հետաքրքիր աչքով ամեն մէկ հան-  
գիպած ողորմելի կինը զլխէն մինչև  
ոտքը կը չափէր : Այլ բոլոր ջանքը պա-  
րապ ելաւ , և գիշերն ալ վրայ հասնե-  
լով՝ յողնած ու յուսահատ ոտքը նորէն  
ազտոտ սենեակը գրաւ :

Այսպէս շատ օր անօգուտ տեղը  
աղջիկը փնտռելու ետեէ եղաւ , այլ 'ի  
զուր . ոչ որ և է նշան մը գտաւ և ոչ  
բան մ'իմացաւ : Բոլորովին յուսահատ՝  
ալ դադրեցաւ փնտռելէն . արդէն իսկ  
երկար ատենէ 'ի վեր կը լսուէր որ  
վերջապէս աղջիկն ալ զինքը պիտի  
թողուր և ուրիշ առանձին տեղ մը քա-  
շուած՝ խաղաղութեամբ հացը գտնե-  
լու պիտի աշխատէր : — Ուրմէն զհայ-  
րը անօթութեանէն մեռնելու համար  
մինակ թողեր գնացեր էր... Ակուա-  
ները կրճատեց ու անիծեց զայն ալ :

## Թ

Դռնէ դուռ ընկած հաց կը մուրար :  
Ամեն մէկ փողը զոր ձեռք կը ձգէր՝  
կամ վրան գլխացողներէն և կամ մին  
զմիւսն խաբխրեցելով՝ նորէն առջի ու  
ճովը զայն կը գործածէր :

Ամբողջ տարի մ'այսպէս անցաւ . ա-  
միսներով բանտ կեցաւ . մնացած ժա-  
մանակն ալ երբեմն կ'երթար կամուրջ-  
ներուն ներքե , երբեմն ալ ուր որ ա-  
ղիւս կը թափեն , ու հօնտեղուանք կը  
քնանար բացօթեայ , վերջապէս ուր որ  
կրնար քիչ մը տաքութիւն և կամ ցրը-  
տոյն ու անձրեւին գէմ հովանի մը ճա-  
րել : Բայց խեղճութեան ու անկարողու-  
թեան վերջին ծայրը հասնելով անգամ,  
հիւանդ ու առանց բնակարանի ալ ըլ-  
լալով , դարձեալ գինովութենէ չէր դա-  
դրեր :

Դժնդակ գիշեր մը վերջապէս , հի-

ւանդ ու ժաթափ բոլորովին , հաղիւ  
դրան մ'անկիւնը կրցաւ քաշուիլ ու  
կծկիլ . անկարգութիւնն ու ախտը զին-  
քը ժամանակէն առաջ ծերութեան  
ներքե ճնշեր էին . թուշերը խոռոչա-  
ցեր ու կապուտկեր , աչքերը նոյնպէս  
մարած ներս գնացեր էին , կթոտեալ  
ճիւղերը թանձր մարմնոյն ծանրու-  
թեան ներքե կը դողային . ջղային սար-  
սուռ մը բոլոր անդամները անդադար  
կը ցնցէր :

Եւ հիմա այս գեղխալից անցուցած  
կենաց տեսարանները , — զորս երկար  
ատենէ 'ի վեր կը ջանար մտքէն դուրս  
վառնտելու , — խառնիխառն վրան կը  
յարձրէին ստէպ : Միտքը խու դար  
տուն տեղ ունեցած ժամանակը , երջա-  
նիկ ու զուարթ բնակարանը , մի առ մի  
իր ընտանիքը կայացընողները , յորոց  
մէկն ալ ինքն էր , մինչև կարծես թէ  
որդւոց հաշնկէց ստուերն իրենց գե-  
րեզմանէն դուրս ցցուած՝ իւր զային  
դիմացը կ'արձանանային . և այս այնպէս  
յայտնի և որոշ՝ որ կարծէր թէ կը լսէր  
խօսածնին ու կը դալէր ալ անոնց :

Շատոնց 'ի վեր մտքէն ելած նայու-  
ածքներ դարձեալ վրան կ'ուղղուէին .  
շատոնց 'ի վեր անհունչ ու սպառեալ  
կարծած ձայններ՝ նորէն ականջէն վար  
կը չլէին , քաղքին զանգակաց հնչիւ-  
նին նման : Բայց շատ չերկարեց այս  
տեսիլը . անձրեւը մէկ կողմէն զինքը  
անգլխաբար կը ծեծէր , ցուրտն ու ա-  
նօթութիւնն ալ միւս կողմէն սիրտը կը  
ծակծկէին :

Ոտք ելաւ , քանի մը քայլ հեռացաւ  
անկէ... փողոցը դատարկացեր մաք-  
րուեր էր զխողին . խոր գիշերով քանի  
մը մնացողներն ալ ըստ կարեւոյն կ'ա-  
ճապարէին քայլերնին . որով իր դող-  
դոյնուն հեծեծանքը մրկրկին սաստկու-  
թեան մէջ կ'երթար կ'անհետանար  
անարձագանգ : Սարսուռը նորէն զին-  
քը դող հանեց , և կարծես թէ արիւնը  
կտրեցաւ մնաց . դարձեալ դրան մը  
ծակը կծկելով՝ ամեն ջանք թափեց որ  
քնանայ :

Սակայն քունը փախեր էր ալ այն

մառախլապատ ու սպակէնման աչքերէն. թէպէտև արթուն ու խելքը գլուխը բայց մտաց դիմացը նորէն սկըսան նորանոր տեսիլներ թափուիլ ու շարուիլ ետևէ ետև: Զուարթութեան ու գինովութեան խառնագոյ կեցցէները ականջը գողգեցուցին, բաժակը շրթանց վրայ էր, սեղանը ախորժաշարժ կերակուրներով լեցուն, — դիմացն էին, կը տեսնէր, կրնար ձեռքըն երկնցընել ու բռնել, — և թէպէտ պատրանքն այնպէս մեծ էր որ իրաւի տեղ ալ կրնար առնուլ ու խաբուիլ, սակայն լաւ կը հասկընար որ երազ էր և ոչ այլ ինչ, որ անապատացեալ փողոցի մը մէջ մինակ նստած կը դիտէր անձրևին խոշոր կաթիլները՝ որ կարկրտի պէս գետնին վերայ կը ցատկըտէին. գիտէր թէ մահը կամաց կամաց կը մօտենար, և չկար մէկը որ ձեռք տայ իրեն, օգնէ, և կամ հոգ տանի վրան ու գուրգուրայ:

Բանկարձ սաստիկ սարսափ մը կըրկին պատեց զինքը. գիշեր ժամանակ բուն իրեն ձայնը լսեր էր լի հեծութեամբ ու հառաչանք, և չէր գիտեր ինչպէս մեկնէր այս նորանշան երևոյթըս: — Մօրիկ ըրէ... հառաչանք մը... ահա ուրիշ մ'ալ: Բոլոր զգացմունքը կ'երթար վրայէն. անյօդ բառեր, խառնարձակ հնչումներ բերնէն դուրս կը գեղանէին. մտտերը մարմնոյն վրայ ուժով փակած կպած՝ կը ջանային բզբտելու զայն: Խելքը գլխէն կ'երթար ու կը սկըսէր օպնութեան կանշիլ որչափ որ տկար շունչը թոյլ կու տար:

Գլուխը վեր վերուց ու երկայն բարակ տխուր ճամբան վերէն վար մէկմը դիտեց: Միտքն եկաւ որ իրեն պէս ուրիշ յոստուծոյ անարգեալներ ալ, — դատապարտեալք թափառելու գիշեր ցորեկ այս բաւղաձև ահաւոր փողոցներու մէջ, — երբեմն իրենց միայնութեանը մէջ խնդեցեր ալ էին: Միտքն եկաւ որ շատ տարի առաջ անտուն թշուառին մէկը առանձին տեղ մը քաշուած ու ձեռքը ժանդոտած հին

զանակ մ'առած՝ կը սրէ եզեր զայն ետքը իր սիրտը մխելու համար, աւելի վեր սեպելով զմահը՝ քան զթափառական անհանգիստ ու անել կեանքը: Ասոնք վրան մեծ ազդեցութիւն ըրին. ինքն ալ մէկէն միտքը դրաւ և որոշեց ինչ որ որոշեց. անպամներն ալ յանկարծ կարծես թէ նորէն իրենց առջի գորութիւնը զգեցան. ցատկեց տեղէն ու գետեզրը գնաց արձանացաւ:

Անձայն անթուիչ Վաղէրու կամրոյն սալաքարներէն վար իջաւ ու մինչև ջուրը հասաւ: Շունչը բռնած անկիւն մը քաշուեցաւ մինչև որ գիշերապահն անցին անկէ: Բանտարգելոյ մը սիրտն այնչափ չի թնդար ուրախութենէն՝ յուսով աղատութեան ու կենաց, որչափ որ այս թշուառիս սիրտը մահուան հեռաւոր պատկերով կը տրոփէր:

Պահապաններն ճիշդ դիմացէն անցան առանց զինքը տեսնելու. և յետ սպասելու որ տոնաձայնը հեռանայ երթայ, զգուշութեամբ վար իջաւ ու մուտ կամարին ներքև ոտքի վրայ շիտակ կայնեցաւ կեցաւ:

Բարձր էր ջուրը, և մերթ ընդ մերթ մեղմաբար կու գար ոտքերը կը շոյէր իր թեթևուկ փրփուրներովն, — կարծես թէ զինքը կը դիւթէր ու դէպ իրեն կը հրաւիրէր —, և դարձեալ ետ կը մղուէր ու իրեն մէջը կամացուկ մը նորէն կը խորտակէր: Անձրևը դադրեր էր, քամին ալ նոյնպէս. ամենայն ինչ հանդարտ ու խաղաղ էր այն վայրը կենին. — այնպէս խաղաղ որ դիմացի եզերաց նուազ ձայնն անգամ՝ (յոյն մէջ կապած նաւակաց զարնելը) հազիւ ականջը կը հասնէր: Թոյլ ու դանդաղ գետը կը վաղէր կ'երթար. ցնորական երևոյթներ ջրոյն երեսը կեցած իրենց մօտենալու նշան կ'ընէին իրեն. կէս մուտ կէս պայծառ աչքերն ջրէն դուրս ելնելով իրեն կը նայէին ու կարծես թէ ծաղր կ'ընէին անոր աղայական երկմտութիւնը. մինչդեռ անդիւն խուլ ու խորին չնջիւններ զինքը ստէպ յառաջ կը մղէին: Այլ չկրցաւ բռնել

ինք զինքը . քանի մը քայլ ետև քաշուեցաւ, ուժն առաւ և յուսահատ ու կոյր թափով մը ցատկեց ջրոյն մէջ և ընկզմեցաւ :

Հինգ րոպէ չանցած՝ ջրոյն երեսն ելաւ . բայց ինչ անհնարին փոփոխութիւն իրեն մտածութեանցն ու զգացմանն՝ այս կարճ միջոցիս մէջ . կեանք, կեանք, որ և է վիճակի մէջ, աղքատութեան, անօթութեան, թշուառութեան — ամենուն՝ բայց եթէ մահուան... Կը կուէր ու կը ծփէր զգուխը պատող ջրոյն դէմ . հոգեվարքի ու զարհուրանաց կանչերով օդը կը հընչեցնէր : Ականջին զարկաւ որդւոյն սպառնալից անէծքը : Քայլ մ'անդին եզերք էր, կրնար երթալ ու աստիճանը բռնել . ձեռք երկնցընել մը բաւական էր խալրսելու համար, բայց ջրոյն ընթացքը զինքը կամուրջին մութ կամարին ներքև կը քշէր ու կը տանէր . նորէն մէկ մ'ալ ընկզմեցաւ... :

Դարձեալ երեցաւ մահուան դէմ կռուելով յուսահատաբար : Դեռ վայրկեան մը, պզտի վայրկեան մ'ալ, գետեզեր նաւերը, կամրջին ճրագնէրը, սև ջուրը, վազուկ ամպերը, այս ամենն ալ սահնցան թռան որոշ ու յայտնի այն մահաբուն աչաց առջևէն : Ընկզմեցաւ ու նորէն վեր եկաւ : Հրաբորբոք բոցեր երկրէ երկինք կը սրանային ու տատանէին աչաց դիմացը, մինչդեռ ջուրը կը չնջէր ականջին մէջ և կ'անզգայացնէր զինքը իր ամենհիգոտիւն գոչումովը : . . . . .

Ժ

Շաբաթէ մ' ետքը քանի մը մղոն հեռու մարմինը կոշտ ուռած զանգուած մը գետեզերքն ընկեր էր : Ոչ որ ճանչցաւ, ոչ որ կաթիլ մ'արցունք թափեց վրան . գերեզման գրուեցաւ ապականուելու անսուգ և անյիշատակ :

## Ի ԾՆՈՒՆԴ Ս. ԿՈՒՍԻՆ

Ի բուրաստանըս Սպիւնայ  
Պահպանօք ամբափակս .  
Որք բուրեն զանմահութիւն  
Երկնազարդ ջինջ ծաղկանց .  
Դուք օրիորդք գաւթեան զարմ,  
Փութացարուք յեկեղեղ,  
Եւ 'ի ծաղկանց անուշից  
Բոլորեցէք փունջ մի նոր :  
Փունջ բոլոր՝ 'ի պլծնէլ  
Զորսան սորին սրբազան .  
Զարմանալոյս այս չքեմազ  
Խոտաօցելոյ կոյս զըստեր :  
Անընկալեալն յաւիտեանց  
Նորաբողբոջ շառաւիղ,  
Այդն չքեմազ՝ ազգարար  
Մերձեցելոյ նոր Արփալոյն :  
Յանկալին հոգեղնաց,  
Մարգարեից սերն և գութք,  
Համբաւ և շուք նա փառաց  
Բերկրազուարճ առուրցն այն :  
Սայր ինքն է սա և կուսան  
Զոր նախ ետես Նսայեսա,

Զեղուն յորդեալ 'ի շնորհաց  
Մընաւ մեզ նոյն Մարիամ :  
Յառաւոտուց յօղարկէ  
Ի շաղ հեղիկ մեղմակաթ ,  
Յեռու շնամ 'ի ծաղկանց  
Պըսակ և փունջ նուերական .  
Ի ծաղկանց՝ որ նշանակ  
Կացցեն նմին միայնոյ  
Յամենայն պարս կուսանաց,  
Զքեմաղազի սրբութեանն :  
Մըղօտս հասէք քաղցեք  
Սպիտակաթմայր նարստից ,  
Զանվըթար օղուց ըզփայլաւ  
Մերկասցի շուշան՝ ծաղկեալ  
Ի մենաւոր ծմակս հովաաց  
Կըլեալ չընէ ըզհէտ սըղփս ,  
Որք գէմ այգոյն 'ի հանգիպոյ  
Թըրփս առեալ կաքաւեն :  
Քան ըզուշան մաքրազեաց  
Սուրբ է պայծառ օգն այն .  
Յօրովայնէ ոչ առ յանձին  
Զոր 'ի մերմէ բնութենէս,